ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
GYUMRI "YOUTH INITIATIVE CENTRE" NGO

ՀՀ ԵՐԻՎԱՆԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» Քաղաքապետության բաժին
ՍՏԱՑՎԱԾ Է. 27.04.2026թ.
ՄՈՒՏՔԱԳՐԱՅԻՆ Թ N 5954

№ Ե047-04/26
27.04.2026

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

ԴԻՄՈՒՄ

«ԳՅՈՒՄՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏՈՒՆ» ԲԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Հաշվի առնելով Գյումրու քաղաքապետարանի և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ԵՆԿ ՀԿ) միջև երկարատև և վստահելի համագործակցության արդյունավետությունն ու «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) ծառայությունների կարևորությունը Գյումրիում սակավ հնարավորություններով պատանիների և երիտասարդների ոչ-ֆորմալ կրթության և զարգացման գործում՝ Ձեզ ենք դիմում Կենտրոնի շարունակական գործունեության ապահովման խնդրանքով:

Համաձայն «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքով տրվող նոր իրավակարգավորումների, որոնցով նաև սահմանվում են տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված մի շարք լիազորություններ, կարևորվում է համայնքներում երիտասարդական քաղաքականության իրականացումը, երիտասարդական միջավայրերի (երիտասարդական կենտրոն, երիտասարդական տարածք) գործարկումը և երիտասարդական ծառայությունների ապահովումը՝ նպատակաուղղված ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ երիտասարդի ձևավորմանը:

Այս համատեքստում կարևոր ենք համարում ընդգծել, որ Գյումրու քաղաքապետարանի և ԵՆԿ ՀԿ-ի միջև համագործակցության արդյունքում 2017 թվականին գույքի անհատույց օգտագործման N1718 պայմանագրով Կենտրոնի գործունեության համար հատկացվել է 99.57 քմ տարածք (հասցե՝ ք. Գյումրի, Վ. Սարգսյան 20), որն ամբողջապես կառուցապատվել, վերանորոգվել, կահավորվել և նյութատեխնիկապես հագեցվել է ԵՆԿ ՀԿ-ի կողմից: Կենտրոնի գործունեության շարունակականությունն ապահովելու համար 2019 թվականի հունիսի 28-ին Գյումրու քաղաքապետարանի և ԵՆԿ ՀԿ-ի միջև կնքվել է փոխհամագործակցության հուշագիր, համաձայն որի 2020, 2021 և 2022 թվականներին Կենտրոնին հատկացվել է տարեկան 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամի չափով դրամական աջակցություն՝ պահպանման ամենամյա ծախսերը (կոմունալ վճարներ և ընթացիկ այլ ծախսեր) հոգալու համար, իսկ 2024

Ալեք Մանուկյան 26, Գյումրի 3108, Հայաստան
26 Alek Manukyan, Gyumri 3108, Armenia
+374 95 91 91 97
yic@yic.am
www.yic.am

թվականի ապրիլի 12-ի ավագանու N 69-Ա որոշմամբ՝ 4.275.600 (չորս միլիոն երկու հարյուր յոթանասունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ 2024 թվականի մայիս-դեկտեմբեր ամիսներին Կենտրոնի անխափան ու շարունակական գործունեությունն ապահովելու համար: 2026 թվականի դեկտեմբերի 26-ին կնքվել է Կենտրոնի գործունեության շարունակականությունն ապահովելու վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր:

Կենտրոնը քաղաքացիական կրթություն, կյանքի հիմնարար հմտություններ, մասնագիտական կողմնորոշում, առողջ ապրելակերպի խթանում, առաջնորդություն և նախաձեռնողականություն, ինտելեկտուալ ժամանց ուղղություններով ծառայություններ է մատուցում տարեկան 700-ից ավել պատանիների և երիտասարդների, այդ թվում՝ սոցիալապես անապահով, սակավ հնարավորություններով, ինչպես նաև Արցախից տեղահանված: 2018 թվականից մինչ օրս Կենտրոնի ծառայություններից օգտվել է 5082 պատանի և երիտասարդ, այդ թվում՝ 10-12 տարեկան 154 ճամբարական:

«Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո Կենտրոնի աշխատանքները «Երիտասարդական միջավայրի» գործունեության նոր ուղեցույցով տրված պետական չափորոշիչներին համապատասխանեցնելու համար ԵՆԿ ՀԿ-ն, Գյումրու քաղաքապետարանի հետ համագործակցությամբ, դիմել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ ԿԳՄՍՆ) ս.թ. հունվարի 20-ին հայտարարված «ԵՔ- ԴՄ-ԵԿ-02/26» ծածկագրով դրամաշնորհային մրցույթին և ճանաչվել հաղթող:

Դրամաշնորհային ծրագրի նպատակն է Հայաստանի հինգ համայնքներում (Գյումրի, Արմավիր, Վաղարշապատ, Արթիկ, Գավառ) գործող «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնների արդիականացման միջոցով ձևավորել ժամանակակից, ներառական և բազմաֆունկցիոնալ երիտասարդական միջավայրեր՝ ապահովելով 13-35 տարեկան երիտասարդների համար որակյալ, հասանելի և կարիքահեն երիտասարդական ծառայություններ:

Ծրագրի շրջանակում Կենտրոնում նախատեսվում է իրականացնել տարածքի ներքին ձևափոխման և կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ, ինչպես նաև նյութատեխնիկական բազայի և գույքի համալրում և վերազինում՝ նպաստելով առավել ժամանակակից, ներառական և բազմաֆունկցիոնալ երիտասարդական միջավայրի ձևավորմանը: Միաժամանակ նախատեսվում է ծառայությունների ընդլայնում և դրանց համապատասխանեցում «Երիտասարդական միջավայրի» պետական ուղեցույցով սահմանված չափորոշիչներին: Ծրագրի իրականացման աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի մարտից և կավարտվեն մինչև 2026 թվականի նոյեմբերի 30-ը: Գյումրիում նշված աշխատանքների համար

ծրագրային բյուջեն կազմում է 19.016.628 (տասնինը միլիոն տասնվեց հազար վեց հարյուր քսանութ) ՀՀ դրամ:

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Հիմք ընդունելով Կառավարության համար երիտասարդական քաղաքականության իրականացման առաջնահերթությունը, «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքը, Կենտրոնի աշխատանքները «Երիտասարդական միջավայրի» գործունեության նոր ուղեցույցով տրված պետական չափորոշիչներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը, Գյումրիում երիտասարդական քաղաքականության իրականացման և համայնքային երիտասարդական ծառայությունների տրամադրման շուրջ քաղաքապետարանի և ԵՆԿ ՀԿ-ի միջև ձևավորված վստահելի ու արդյունավետ համագործակցությունը, ինչպես նաև կարևորելով քաղաքապետարանի առանցքային դերը Կենտրոնի անխափան գործունեություն ծավալելու և համայնքային երիտասարդական ծառայությունների շարունակական ապահովման հարցում՝ դիմում ենք Ձեզ՝ հետևյալ խնդրանքով.

1) Աջակցել Կենտրոնի գործունեության շարունակականության ապահովմանը՝ համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելով 25.12.2017 թ. գույքի անհատույց օգտագործման N1718 պայմանագիրը (ավարտվում է 2027 թվականի դեկտեմբերի 25-ին) ևս 10 (տասը) տարի ժամանակով երկարացնելու հարցը՝ հաշվի առնելով ԿԳՄՄՆ վերոնշյալ դրամաշնորհային ծրագրի շրջանակում Կենտրոնում նախատեսված աշխատանքները:

2) Աջակցել Կենտրոնի գործարկման ծախսերի համաֆինանսավորման հարցում (մարդկային ռեսուրսների հետ կապված ծախսեր)՝ 2026 թվականի մայիս-դեկտեմբեր ամիսների ծախսերի նախահաշիվը ներկայացնելով համայնքի ավագանու հաստատմանը (Հավելված 1):

Կենտրոնի կողմից համայնքային երիտասարդական ծառայություններն արդյունավետ ու նպատակային իրականացնելու համար անհրաժեշտ է, որ **Գյումրու քաղաքապետարանը** տարեկան կտրվածքով հոգա մարդկային ռեսուրսների հետ կապված ծախսերը (կենտրոնի համակարգողի և երկու երիտասարդական աշխատողի աշխատավարձ)՝ **5,820,000** (հինգ միլիոն ութ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:
2026 թվականի մայիս-դեկտեմբեր ժամանակահատվածի համար պահանջվող ֆինանսավորումը կազմում է **3,880,000** (երեք միլիոն ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

Իր հերթին, **ԵՆԿ ՀԿ-ն** կհոգա Կենտրոնի մարդկային ռեսուրսների և ընթացիկ գործունեության հետ կապված մնացած բոլոր ծախսերը, տարեկան ընդամենը՝ **9,804,260** (ինը միլիոն ութ հարյուր չորս հազար երկու հարյուր վաթսուն) ՀՀ դրամ:

2026 թվականի մայիս-դեկտեմբեր ժամանակահատվածի համար ԵՆԿ ՀԿ-ի կողմից ներդրվող գումարը կազմում է **8,058,060** (ութ միլիոն հիսունութ հազար վաթսուն) ՀՀ դրամ:

Նախապես շնորհակալություն ենք հայտնում Ձեր պատրաստակամության և համագործակցության համար:

Հարցերի դեպքում, սիրով պատրաստ ենք քննարկել:

Հարգանքով՝

Արթուր Նաջարյան
ԵՆԿ ՀԿ խորհրդի նախագահ

Ալեք Մանուկյան 26, Գյումրի 3108, Հայաստան
26 Alek Manukyan, Gyumri 3108, Armenia
+374 95 91 91 97
yic@yic.am
www.yic.am

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի

2026 թ. մայիս - դեկտեմբեր ժամանակահատված

Բ/տ	Ծախսի նկարագրություն	Միավոր	Միավորի քանակ	Միավորի գին	Ընդամենը	Համայնքապետարանի ներդրում	ԵՆԿ ներդրում
1	**Մարդկային ռեսուրսներ**						
1.1	Կենտրոնի համակարգող / 100%	Ամիս	8	195,000	1,560,000	1,560,000	-
1.2	Երիտասարդական աշխատող /2 անձ* 100%	Ամիս/անձ	16	145,000	2,320,000	2,320,000	-
1.3	Հավաքարար / 40%	Ամիս	8	60,000	480,000	-	480,000
				Ընդամենը 1	**4,360,000**	**3,880,000**	**480,000**
2	**Ընթացիկ գործունեության ծախսեր**						
2.1	Կոմունալ վճար (գազ, էլ. էներգիա, ջուր)	Ամիս	8	20,000	160,000	-	160,000
2.2	Հեռահաղորդակցում (Ինտերնետ, հեռախոս)	Ամիս	8	12,800	102,400	-	102,400
2.3	Գրենական և ընթացիկ գործունեության պարագաներ/նյութեր	Ամիս	8	9,000	72,000	-	72,000
2.4	Ծայրամասային թաղամասերում շարժական երիտասարդական աշխատանքի և ընթացիկ գործունեության համար տրանսպորտային ծախսեր	Ամիս	8	7,000	56,000	-	56,000
2.5	Ընթացիկ պահպանման ծախսեր	Տարի	1	140,000	140,000	-	140,000
2.6	Ամենամյա ցերեկային բակային ճամբար	անգամ	1	300,000	300,000	-	300,000
2.7	Թեմատիկ աշխատարաններ, դասընթացներ, մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ, խորհրդատվություններ, ուսումնական և ճանաչողական այցեր	Միանվագ	1	3,450,000	3,450,000	-	3,450,000
				Ընդամենը 2	**4,280,400**	**-**	**4,280,400**
3	**Բաց երիտասարդական կենտրոնի մոդելի ներդնում, գործարկում, աշխատանքների կազմակերպում և մոնիթորինգի/գնահատման իրականացում**						
3.1	Կենտրոնների ծրագրի պատասխանատու /20%	Ամիս	8	96,000	768,000	-	768,000
3.2	Մոնիթորինգի և որակի պատասխանատու / 15%	Ամիս	8	117,000	936,000	-	936,000
3.3	Հաշվապահ / 5%	Ամիս	8	21,000	168,000	-	168,000
3.4	Մեթոդական խորհրդատվություն, տվյալների հավաքագրում-վերլուծություն, բազաների պատրաստում, վերապատրաստումների անցկացում	Ժամ	150	3,750	562,500	-	562,500
3.5	Մասնագիտական վերապատրաստումներ (տեղական և միջազգային)	Միանվագ	1	693,160	693,160	-	693,160
3.6	Գործուղման ծախսեր	Տարի	1	170,000	170,000	-	170,000
				Ընդամենը 3	**3,297,660**	**-**	**3,297,660**
				ԸՆԴԱՄԵՆԸ 1 - 3	**11,938,060**	**3,880,000**	**8,058,060**